G.M. TONOYAN

THE PROBLEM OF THE BLACK SEA STRAITS IN FOREIGN POLICY PLANS OF RUSSIA IN THE 1890s

Despite the attempts of rapprochement with the Turkish Sultan in the 1890s, the imperial government was considering the capture the straits, presented, in particular, in the projects of the Russian ambassador in Constantinople Nelidov. The maneuvering on this issue in practice was conditioneded by the rivalry of great powers in the Middle East.

Keywords: the Black Sea straits, Russia, the Ottoman Empire, aggressive plans, the Russian-French Alliance.

ՀՏԴ 327.51:341.92

Տ.Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՉԵՉԵՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ

Արցախյան հակամարտությունը 20-րդ դարի վերջին հասել էր իր գագաթնակետին, և այդ ամենը զուգորդվեց ԽՍՀՄ-ում գլուխ բարձրացած ազգային հուժկու շարժումներով ու ցնցումներով: Ներկայացված է հակամարտության մեջ Թուրքիայի ունեցած դերակատարումը, ապացուցվում է նաև Կովկասում մուսուլմանական տարբեր ժողովուրդների միավորման փաստը՝ ընդդեմ տեղի քրիստոնյա ազգաբնակչության: Այս վտանգը այսօր ևս առկա է և կարող է ծանր հետևանքներ ունենալ տարածաշրջանում:

Առանցքային բառեր. Հյուսիսային Կովկաս, չեչեն զինյալներ, Թուրքիա, ԼՂՀ հակամարտություն:

ԽՍՀՄ փլուզումից հետո սանձազերծված ռուս-չեչենական հակամարտությունը իր արձագանքներն ունեցավ նաև հայ-ադրբեջանական հակամարտության ընթացքում: Չեչեն գրոհայինները, որոնք վարում էին Ռուսաստանից անջատվելու քաղաքականություն, արագ արձագանքեցին ադրբեջանա-թուրքական կողմի ձեռնարկումներին և օգնության շտապեցին իրենց հավատակիցներին և արցախյան հակամարտության ընթացքում գործուն մասնակցություն ունեցան ադրբեջանցիների սադրիչ գործողություններին՝ ընդդեմ Արցախի:

Ադրբեջանական կողմին աջակցելը չեչենների համար կարևորվում էր երկու հանգամաքով: Չեչեն գրոհայինները ռուսական ուժերի դեմ պայքարում մշտապես օգնություն էին ստանում ադրբեջանական կողմից և ի պատասխան այդ ամենի՝ շտապեցին օգնել իրենց ռազմավարական դաշնակցին: Հաջորդ կարևոր հանգամանքը, որի համար չեչենները մասնակցեցին այս հակամարտությանը, Հյուսիսային Կովկասի անկախությանը միտված թուրք-ադրբեջանա-

կան ձգտումներն էին: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ պաշտոնական Բաքուն մինչև 1993թ. վերջը չէր ցանկանում անդամագրվել ԱՊՀ-ին: Այս «համեստությունը» բացատրվում է նաև նրանով, որ դեռևս պարզ չէր ռուս-չեչենական հակամարտության ելքը, իսկ Ադրբեջանի կանխատեսումներով՝ Հյուսիսային Կովկասը կարող էր անջատվել Ռուսաստանից և Գրոզնի կենտրոնով դառնալ առանձին անկախ մի միավոր: Այս կապակցությամբ դեռևս 1990-ականների սկզբներին Ադրբեջանի «ազգային ճակատի» առաջնորդ Աբուլֆազ Էլչիբեյը հատուկ այցելություն էր կատարել Գրոզնի, որտեղ առանցքային հարցերից մեկն էր Կովկասի ապագայի հարցը [1,16]: 1992թ. գարնանից սկսած՝ ադրբեջանական մուսուլման առաջնորդներից կազմված հատուկ պատվիրակությունը մեկնեց Չեչնիա, որը հատուկ բանակցություններ ունեցավ Ջոխար Դուդաևի հետ: Այս պատվիրակության կազմի մեջ էր գտնվում նաև Ադրբեջանի պաշտպանության նախարարության հատուկ ներկայացուցիչը: Երկկողմանի հանդիպման ժամանակ, բացի փոխհամագործակցության և երկու ժողովուրդների միջև մշակութային և այլ կապերի հաստատումից, քննարկվեց նաև ռազմական համագործակցության հարցը: Այդ բանակցությունների գլխավոր մասն էին կազմում Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների ժամանակ չեչեն զինվորների մասնակցությունը: Ադրբեջանական կողմը խոստանում էր, որ եթե Դուդաևը տրամադրի մարդկային ուժ, ապա վերջիններիս կհատկացվի անհրաժեշտ զենք ու ռազմամթերք [2]:

Դեռևս 1990թ. սկզբին Խորհրդային զորքերը Ադրբեջանական հատուկ նշանակության ջոկատների գլխավորությամբ ձեռնարկել էին Շահումյանի շրջանի հայաթափումը, հատկապես Գյուլիստանն իր շրջակայքով, որը դեռևս 1813թ. ռուս-պարսկական պատերազմի ավարտից հետո, նույն Գյուլիստանում կնքված պայմանագրով, անցել էր Ռուսաստանի տիրապետության տակ, և այդ ժամանակից սկսած հայերի հոսքը գնալով շատացավ այս շրջանում և նախկին հայկական փոքր գյուղերն ու քաղաքները սկսեցին արագ թափով զարգանալ՝ հիմք դնելով բազմաթիվ մեծ ու փոքր տնտեսությունների [3]: Ադրբեջանական իշխանությունների կողմից միջոցներ ձեռնարկվեցին այս շրջանները հայաթափելու և չեչեն փախստականներով բնակեցնելու համար: Սակայն պետք է նշել, որ այս գործընթացը կատարվում էր Ադրբեջանի և Չեչնիայի ղեկավարների հատուկ համաձայնությունից հետո, քանի որ Դուդաևը, Գրոզնի քաղաքը ամրացնելու համար, այնտեղից դուրս բերելով ազգաբնակչությանը, ադրբեջանական կողմի աջակցությամբ բնակեցնում էր Շահումյանի շրջանի որոշ բնակավայրերում [4, 254]: Ադրբեջանական կողմին այս վերաբնակեցումը շատ ձեռնտու էր, քանի որ վերջինս ուժեր էր կենտրոնացնում արցախյան կողմի դեմ

պայքարելու համար: Պետք է նշել, որ ամենևին էլ պատահական չէր, որ չեչեն փախստականները անարգել բնակվեցին Շահումյանի շրջանում, քանի որ Ադրբեջանը գտնում էր, որ կարող է Ստեփանակերտի ղեկավարությանը ապացուցել, որ այս շրջանի դեմոգրաֆիական պատկերը ամենևին այն չէ, ինչ ներկայացնում է արցախյան կողմը: Սակայն ադրբեջանական կողմը հաշվի չէր առել, որ բնակեցնելով այս շրջանները չեչեն մուսուլմաններով, չէր կարող փոխել այս շրջանի դեմոգրաֆիական պատկերը: Որոշ ժամանակ այստեղ բնակվելուց հետո չեչեն ազգաբնակչությունը աստիճանաբար սկսեց թողնել այս տարածաշրջանը, և այդպես էլ այնտեղ նրանք մեծամասնություն չկազմեցին հայերի նկատմամբ[3]: Այնուամենայնիվ, ադրբեջանական բանակում ընդգրկվեցին մեծաքանակ չեչեն գրոհայիններ, որոնք սկսեցին լուրջ գործողություններ իրականացնել:

Սակայն Դուդաևին այնքան էլ չէր հետաքրքրում հայ ադրբեջանական հակամարտությանը Չեչնիայի մասնակցությունը, և նա որոշում ընդունեց, որ այդ ռազմական գործողություններին պետք է մասնակցեին միայն կամավոր ցանկացողները, որոնք պետք է Ադրբեջանի կողմից ստանային վարձավճար: Այդ վարձավճարը, որոշ աղբյուրների համաձայն, կազմում էր յուրաքանչյուր օրվա համար 600-1000 ռուբլի [5]: Չեչեն գրոհայինների համեմատաբար մեծ զորախումբ Շամիլ Բասաևի գլխավորությամբ, սկսած 1992թ. մայիսից, մտավ ԼՂՀ և մասնակցեց Շուշիի համար մղվող ռազմական գործողություններին: Չեչենները հատկապես համառ մարտեր մղեցին 1993թ. ամռանը Աղդամում [6,179-180]: Սկզբնական շրջանում զգալի հաջողությունների հասան: Սակայն նրանց հեռանալուց հետո ադրբեջանական ուժերը գլխովին ջախջախվեցին: Չեչեն զինվորները, մարտի մեջ մտնելով հայկական կողմի հետ, առաջին իսկ օրվանից սկսած շատ լուրջ կորուստներ տվեցին, և հայկական կողմը հակառակորդի սպանվածների շարքում բազմիցս հայտնաբերում էր Ռուսաստանի քաղաքացի հանդիսացող, ազգությամբ չեչեն, սպանված զինվորների[7,63]: Չեչեն պայմանագրայինների հավաստմամբ՝ այդ պատերազմին իրենք մասնակցում էին՝ ելնելով կրոնական մոլեռանդությունից, հանուն Կովկասի մղվող «հպարտությունից», ինչպես նաև ռուս-չեչենական հակամարտության նմանությունից [5]:

1993թ. Հուլիսին «Чечен-пресс»-ը հատուկ հոդվածով անդրադառնում է Արցախում ադրբեջանական բանակի կազմում չեչեն գրոհայինների մասնակցությանը: Այստեղ նշվում է նաև գրոհայինների շարքերում ունեցած զոհերի ու վիրավորների թվաքանակը [8]:Ռազմական գործողությունների ընթացքում նույն՝ 1993թ. ամռան ամիսներին մի քանի չեչեն գրոհայիններ, որոնք գլխավորում էին առանձին ջոկատներ, հայկական ուժերի կողմից գերեվարվում են: Գրոհայիննե-

ին ազատելու նպատակով հատուկ պատվիրակություն է ժամանում Արցախ և բանակցություններ վարում ԼՂՀ ղեկավարության հետ [9,221]:

Բիշքեքի 1994թ. մայիսի 15-ի կրակի դադարեցման մասին համաձայնագրի ստորագրումից հետո չեչեն գրոհայինները ստիպված եղան հեռանալ Արցախից և Ադրբեջանից՝ խոստանալով, որ դեռ վերադառնալու են և օգնելու են իրենց հավատակիցներին «արդարության վերականգնման համար»: Նրանք հայտարարում էին, որ «...կազատագրենք Ղարաբաղը հայերից, երբ լուծում կտրվի մեր ներքին խնդիրներին» [10]:

Չեչեններին հատուցելու համար ադրբեջանական կողմը դեռևս 1992թ. հուլիսից Չեչնիա էր ուղարկում մեծ քանակությամբ ռազմամթերք և զինտեխնիկա: Զենքի տեղափոխումը տեղի էր ունենում նաև մասամբ Վրաստանի և Դաղստանի տարածքներով, որի համար ադրբեջանական կողմը Վրաստանին վճարում էր շատ չնչին գումար [2]: Ադրբեջանական կողմի վրա, անշուշտ, մեծ ազդեցություն ուներ նաև Թուրքիան, որը շահագրգռված էր հնարավորինս օգնել Ադրբեջանին՝ պարտության մատնելու հայկական կողմին: Սակայն, տեսնելով նշված իրավիճակը և չեչենների կորուստները, Թուրքիան հատուկ միջոցներ ձեռնարկեց, որ չեչենական խմբավորումները 1994թ. դեկտեմբերին հեռանան Չեչնիա: Այս «սրտագին» փոխօգնությունից հետո չեչենական և ադրբեջանական կողմերը սկսեցին միմյանց հետ ակտիվ համագործակցել ռազմական առք ու վաճառքի ասպարեզում, որն էլ մեծ մասամբ օգնեց չեչեններին ռուս-չեչենական առաջին պատերազմում: Այստեղ իրականացվում էին նաև զենքի փոխադրումներ Թուրքիայից Չեչնիա, գլխավորապես Ադրբեջանի տարածքով, իսկ երբեմն էլ Վրաստանի տարածքով՝ Ադրբեջանի միջամտությամբ [11,13]:

Պետք է նշել, որ նույնիսկ «Московские новости» լրագիրը, հիմնվելով հատուկ աղբյուրներից վերցրած տեղեկությունների վրա, նշում էր, որ թուրքական «Միջինասիական թուրքական ընկերություն», «Թուրքական բարեկամության ֆոնդը Սաուդյան Արաբիայում» և նմանատիպ այլ կազմակերպությունները հատուկ ֆինանս են տրամադրել չեչեններին զինելու համար [12,255]: Պատերազմի ընթացքում ծանր վիրավոր չեչեն գրոհայիններին նույնիսկ տեղափոխում էին թուրքական լավագույն հիվանդանոցներ և անվճար բուժում:

Այսպիսով, բազմաթիվ փոստերն ու ապացույցները ցույց են տալիս, որ այսօր ևս Կովկասյան տարածաշրջանը գտնվում է ռազմական գործողությունների վերսկսման վտանգի առջև: Դեռևս Արցախյան պատերազմի ընթացքում ռազմական գործողություններին չեչեն գրոհայինների մասնակցությունը ցույց է տալիս ադրբեջանա-թուրքական կողմի ագրեսիվությունը հայ ժողովրդի դեմ, քանի որ հատկապես Թուրքիան ամեն ինչ անում էր չեչեններին այս հակամար-

տության մեջ ներգրավելու համար: Այդ պատճառով այսօր ևս ստահոդ են նաև թուրք-ադրբեջանական կողմի այն հայտարարությունները, որոնք միտված են տարածաշրջանում կոնֆլիկտների խաղաղ ճանապարհով կարգավորմանը և կայունության պահպանմանը:

Վերոհիշյալը ապացուցվեց նաև 2016 թ. ապրիլի 1 լույս 2-ի գիշերը ադրբեջանական կողմի սանձազերծած քառօրյա սադրիչ գործողություններով: Արցախյան բնակավայրերը ռմբակոծելով և զինտեխնիկայի լայնամասշտաբ կիրառմամբ ադրբեջանական կողմը փորձեց արցախյան զորամիավորումներին անակնկալի բերել և կրկին ներքաշել լայնածավալ մարտական գործողությունների մեջ: Սակայն այդ մտայնությունները տեղի չունեցան՝ շնորհիվ արցախյան կողմի զսպիչ ու գրագետ գործողությունների: Այստեղ ևս երևաց այն փաստը, որ մեծ թվով վարձկան զինյալներ էին կենտրոնացվել Արցախի սահմանների մոտ, որոնց մի մասը, մտնելով զինված բախումների մեջ և չդիմանալով ճնշմանը, ստիպված փախուստի դիմեց և գնդակահարվեց յուրայիների կողմից: Պետք է փաստել, որ անկախ ժամանակներից և զինատեսակների առկայությունից, Արցախա-ադրբեջանական կոնֆլիկտը, ունենալով խոր արմատներ, կլուծվի միայն խաղաղ ճանապարհով: Ռազմական լայնածավալ գործողությունների դեպքում ադրբեջանական կողմը դատապարտված է տարածքային և մարդկային կորուստներ կրելու, ինչպես դա տեղի ունեցավ 20-րդ դարի վերջում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Расизаде**. Азербайджан: новые политические ориентиры //Азия и Африка сегодня. - М., 1993.- №1.
2. «Экспресс-хроника», № 28, 1992.
3. Независимая газета. 01.08.2000. Иван Айвазовский, Состоится ли «второе пришествие» чеченцев в Карабах?
4. **Гродненский Н.Н.** Неоконченная война: История вооруженного конфликта в Чечне.-Харвест, 2003.
5. «Республика Армения», 01.08.1992.
6. Thomas de Waal. Black Garden. Armenia and Azerbaijan through Peace and war.- New York and London, 2003.
7. «Журналисты на войне в Карабахе», М., 2002.
8. «Известия» (московский вечерний выпуск), 21.07.1992. Чеченские наемники воюют в Закавказье.
9. **Шерматова С.** Исламский фактор в руках политических элит.- М., 2002.
10. «Общая газета», 28.10.1999.
11. **Юнусов А.** Краткая этнодемографическая характеристика Азербайджана.- Владикавказ, 2002.
12. **Киреев Н.Г.** Российско-турецкие отношения в контексте евразийских концепций.- М., 2003.

Т.Г. АРУТЮНЯН

УЧАСТИЕ ЧЕЧЕНЦЕВ В АРМЯНО-АЗЕРБАЙДЖАНСКОМ КОНФЛИКТЕ

В конце XX века Карабахский конфликт достиг своего апогея и сопровождался активизированными в СССР бурными национальными движениями и сотрясениями. Представлена роль Турции в данном конфликте, доказывается факт объединения кавказских мусульманских народов против местного крестьянского населения. Эта опасность присутствует до сих пор и может иметь серьезные последствия для региона.

Ключевые слова: Северный Кавказ, чеченские боевики, Турция, Нагорно-Карабахский конфликт.

T.G. HARUTYUNYAN

THE CHECHEN PARTICIPATION IN THE KARABAKH CONFLICT

At the end of the 20th century, the Karabakh conflict reached its peak and was accompanied by a storm of national movements and tremors intensified in the USSR. Turkey's role in the conflict is introduced. The fact of combining of Muslim peoples against the local peasant population is proved. This threat exists until now and may have serious consequences for the region.

Keywords: North Caucasus, Chechen rebels, Turkey, NK conflict.

ՀՏԴ 1(479.25)

Ա.Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Դիտարկվում է Դավիթ Անհաղթի գործնական փիլիսոփայությունը, որի հիմքում ընկած է մարդու բարոյական կատարելագործումը, որը անհարժեշտ է պետականաշինության և քաղաքացիական հասարակության զարգացման համար:

Առանցքային բառեր. գործնական փիլիսոփայություն, մշակութային արժեք, առաքինի, հոգու խնամք, բարոյական կատարելագործում:

Փիլիսոփայության գիտելիքի մեջ իմացականն ու արժեքայինը համադրված են: Այն ձգտում է դեպի գեղեցիկն ու վեհը, առաքինին ու բարին: Եվ այդ ճանապարհին շատ անհրաժեշտ է ճշմարտության իդեալը: Այդ փաստով կարելի է բացատրել, որ փիլիսոփայական գիտելիքը ոչ միայն իմացաբանական գիտելիքն է, այլև արժեքայինը: Գոյի որ բնագավառին էլ որ անդրադառնում ենք, փորձում ենք այնտեղ մարդկային գործունեության իմաստը տեսնել, բացահայտել փիլի-